ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2011 թվականի թիվ 205- Ա

ՀԱՄԼԵՏ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ <ԲԵՐԴԻ ՎԱՐԺԱՐԱՆ> ՊՈԱԿ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 4-ի <Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին> N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1)-ին ենթակետով '

ո ր ո շ ու մ եմ.

1.Մինչև մրցույթով տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելը, 2011 թվականի դեկտեմբերի 21-ից <Բերդի վարժարան> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել նույն դպրոցի փոխտնօրեն Համլետ Գարեգինի Ծատուրյանին և կնքել աշխատանքային պայմանագիր:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ. դեկտեմբերի 21
ք.Իջևան